ՆՈՐ-ԴԱՐ

№ 19 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ 9 փետրվարի 1885 Շաբաթ 9 փետրվարի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 19

Տարեկան 10 ռուբլի. վեց ամիսը՝ 6 ռուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Հատով 5 կոպէկ:
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ"
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար՝ կրկնապատիկ:

„ՆՈՐ-ԴԱՐ"-Ի

Ներկայ 1885-ի համար բաժանորդագրութիւնը շարունակվում է: Բաժանորդ են գրվում միմիայն խմբագրատանը, Պօստատան եւ Սամբրա վրաց եկեղեցուն հանդէպ: Օտարաքաղաքացիները դիմում են խմբագրութեան հետեւեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ»:

Բաժանորդագինն է. տարէնը՝ 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.:

Եւրոպայում և Թիւրքիայում տարեկան բաժանորդագինը՝ 30 ֆրանկ:

Բաժանորդագրութիւնը ընդունվում է միշտ ամսի 1-ից հաշուած:

Редакція и контора газ. «Норъ-Даръ» помѣщаются въ центрѣ города, за Почтой, на Троицкомъ переулкѣ, въ домѣ № 9.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Պատգամաւորների ընտրութիւնը Թիֆլիսում.
Քրոնիկոն. — Լուրեր. Վազի բազմացնելը.
Թղթակցութիւններ. — Նոր-Նախիջևան. Բաթում.
Քաղաքական. — Գերմանիա. Իտալիա. Աւղանիստան.
Խառն լուրեր.
Հեռագիրներ.
Առևտրական Տեղեկատու.
Թեր և դէմ.
Յայտարարութիւններ.
Բանասիրական. — Գիւղական կեանքից.

Թիֆլիս, 8 փետրվարի 1885:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ:

—

Կիւրակի ամսոյս 10-ին Թիֆլիսի եկեղեցիներում պիտի կատարուին պատգամաւորների ընտրութիւնները: Եկեղեցիներում ընտրուած պատգամաւորները յետոյ կը գումարուին Թիֆլիսի թեմի զանազան քաղաքներից և գաւառներից եկած պատգամաւորների հետ և միասին ժողով կազմելով կընտրեն մի թեմական պատգամաւոր, որը իբրև Վրաստանի և Իմերէթի թեմի ներկայացուցիչ կը գնայ ս. Էջմիածին և կը մասնակցէ ապրիլի 19-ին ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեանը:

Ուրեմն այդ ամեն ընտրողական գործողութիւնների վերջնական նպատակն է՝ ընտրել ս. Լուսաւորչայ գահի համար մի արժանաւոր յաջորդ:

Բայց ո՞վ է արժանաւորը, ո՞վ է յարմարագոյնը այդ բարձր և սրբազան պաշտաման համար—այդ է խնդրի ծանր կողմը, որովհետև եկեղեցւոյ համար մէ՛կ արժանաւոր պէտք է հարկաւոր, իսկ արժանաւոր անձինք կարող են մի քանիսը լինել:

Ահա այդ մի քանի արժանաւոր անձինքների միջից ընտրութիւն անելու համար հրաւիրվում է Թիֆլիսի թեմը յայտնելու իւր ցանկութիւնը, իւր կամքը:

Թեմի ցանկութիւնը և կամքը յայտնելու համար օրինական ճանապարհով հետևեալ միջոցներն են գործ դնվում. ժողովուրդը եկեղեցիներում ժողովուելով ընտրում է պատգամաւորներ այնպիսի անձինքներից, որոնք հաւատարմութեամբ կարող են ներկայացնել ժողովրդի տրամադրութիւնը և կամքը. յետոյ այդ պատգամաւորները ժողովրդի կողմից, ժողովրդի անունով կընտրեն թեմական պատգամաւոր այնպիսի մի վստահելի անձն, որը իրեն ընտրող ժողովրդի կամքը և տրամադրութիւնը իւր մէջը ամփոփելու ամեն հանգամանքներն ունի:

Թեմական պատգամաւորը այդպիսով հանդիսանում է թեմի ժողովրդի կամքի ներկայացուցիչ և մասնակցում է կաթողիկոսի ընտրութեանը անմիջապէս ձեռքը խղճի վերայ դրած իւր քուէն տալով կաթողիկոսացուներից յարմարագոյնին:

Այսպէս կատարուած ընտրութիւնը հասնում է իւր բարձր նպատակին, և այսպիսի ընտրութեան ժամանակ միայն կարելի է ասել, որ թեմական պատգամաւորը ճշմարիտ իւր անձովը ներկայացնում է իրեն ընտրող թեմի կամքը:

Իսկ եթէ ժողովուրդը անտարբեր և հեռու է մնում եկեղեցուց և ընտրութիւններից, եթէ մարդիկ ընտրութիւնների ժամանակ ղեկավարվում են, եկեղեցին և նրա բարձր շահերը թողած, մասնաւոր, անձնական, առանին հաշիւներով, հասկանալի է, որ այդպիսի ընտրութիւններից ընտրուածը միմիայն ձևական կերպով է ներկայացուցիչ:

Եթէ Մարկոսը կը տայ իւր քուէն Կիրակոսին, որովհետև երկիւղ ունի թէ մի գուցէ Կիրակոսը նրա վէքսելը բողոքէ, կամ թէ Կիրակոսը Մարկոսին հասկացրել է որ նրա համար արդիւնաւոր պաշտօն ունի պատրաստի, այդպիսի առևտրով Կիրակոսը ստանալով Մարկոսի քուէն, ամենևին կարող չէ ներկայացնել սրա կամքը: Մարկոսը իւր սրտի խորքում Կիրակոսից բոլորովին տարբեր ցանկութիւն ունի, նա իւր խղճը չէ տուել Կիրակոսին, այլ նրա հետ առևտուր է արել, թէ վերջումը այդ առևտուրից ո՞վ է շահվում, այդ հետաքրքիր չէ:

Կարող ենք երևակայել այն ընտրութիւնների հետևանքը, որտեղ Մարկոսները և Կիրակոսները շատ և շատ անգամ բազմապատկուած հանդէս են գալիս և կաթողիկոսական ընտրութիւնը իբրև յարմար և յաջող առիթ առած իրենց առևտուրը կատարում են:

Հասկացողին, անկեղծ հային և հայութեան բարեկամին բաւական է մէկ խօսք, որ նա ամեն բան ըմբռնէ, մօտիկ անցեալից խրատուի, մեր եկեղեցւոյ արդի թշուառ կացութիւնը ի նկատի առնէ. իսկ չը հասկացողին, կեղծ և անտարբեր հային հազար խօսքերն էլ ոչինչ չեն հասկացնիլ:

Թեմական պատգամաւորների յաջող ընտրութիւնից է կախուած արժանաւոր ու յարմար կաթողիկոսի ընտրութիւնը:

Մի քանի կոպէկ եկեղեցւոյն տալով, մի քանդուած եկեղեցւոյ պատը շինելով, մի դպրոց բանալով, այս կամ այն բարեգործական հաստատութեան մի գումար նուիրելով կամ տօն օրերին եկեղեցում մոմեր վառելով ազգի տունը չի՛ շինուիլ...

Կաթողիկոսի ընտրութիւնն է,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ.

—

Քանիցս անգամ ձեր ազգաշահ լրագրի մէջ արծարծուել է այն միտքը, որ գիւղական հասարակութիւնները տարուան մի յայտնի ժամանակ, աշնան կիսից սկսած մինչև գարնան կէսը դատապարտուած են անգործունէութեան. և թէ այդ անգործունէութիւնը որքան չարիքներ է ծնեցնում միամիտ դասակարգի մէջ դա ակնյայտնի է. ի՞նչ են անում ձմեռ ժամանակ ծերերը և ի՞նչ—երիտասարդները: Ծերերը վաղուց մոռացութեան են տուել իրենց ջահելութիւնը, իսկ երիտասարդները նրանց կապը չընդհատելու համար շարունակում են.

Հասակաւորները ձմեռուան այդ երկար ու ձիգ ժամանակները խմբվում են գիւղամիջերում արևակէզ տեղերը, ոմանք յենուած չոր քարերին, ոմանք էլ նստած, միւսներն էլ կանգնած, խօսակցութեան նիւթ ունենալով օրուան պատահարքները. իսկ երբ վերջացնում են, այդ պատահարքին կցում են իրենց գլխով անցած նախկին արարքները. այսպիսով օրերը գլորվում են և մեր նոր սերնդի առաջնորդները զրկվում են օգտակար—արծաթէ ժամերից:

Երիտասարդները ընդհակառակը հասակաւորների հակապատկերներ են ներկայացնում. Նրանք ժողովւում են ժամադիր նշանակուած տեղ, որը ամեն տեղից երևում է—խօսում են, ծիծաղում, ամենքը իրենց լսած կամ տեսած նորութիւնները պատմում. և երբ վերջացնում են, դրանցից աւելի համարձակը խօսք է բացում իւր նշանածի մասին, թէ ինչպէս նրան տեսակցեց, ինչ խօսեց. միւսներն էլ հետևելով այդ օրինակին ամենքը իրենց նազելու անունները բերաններն են առնում. Նրանք որոնք դեռ նշանուած չեն, մասնակցում են այդ խօսակցութեանց, որպէս զի այդ կեանքի և երջանկութեան նոր ասպարէզը մտնելու համար անփորձ չգտնուին, և երբ վերջացնում „գեավը", հանդէս են գալիս նրանք, որոնք մօտօրօք միայն նշան— են արել իրենց սրտագաւ սիրոյն համար. Այս վերջինները աւելի են առաջ տանում իրենց գործը. ուզում եմ ասել այնպիսի միջոցների են դիմում որ ստիպուած՝ ծնողները կատարում են դրանց կամքը, թէև նրանք լինին 15—18 տարեկան:

Ծնողները մի ժամանակ նկատում են որ իրենց տան ջահելը, ամեն ժամանակուայ պէս ուրախ չէ խօսակցում ընտանիքի մէջ, ախորժակով չէ ուտում, անժամանակ առաւօտը վաղ դուրս գնում, գիշերով ուշ տուն է գալիս. այդ արարքը աւելի նկատողութիւն է առնում ծնող մայրը, ուստի մտնում է խօսակցութեան մէջ իւր ջահելի հետ. Երիտասարդի առաջ կարվում է կորդեան հանգոյցը, և նա յայտնում է իւր սիրածի մասին, ասելով որ վաղուց սիրել է այն ինչ աղջկան. եթէ գլուխ չը բերուի սպառնում է իւր մահուամբ. մի առժամանակ թէև ծնողքը ուշադրութիւն չեն դարձնում իրենց ջահէլին, բայց ջահէլը արդէն դիմել է այնպիսի միջոցների, որ ծնողները իրենց „արուը" չը կորցնելու համար, կատարում են տղայի առաջարկութիւնը, նշանում են և պսակում. Այդ ձևը ընդհանուր է և արդէն մօդա է դարձել գիւղերում 20 տարեկան երիտասարդը արդէն ծնող է փափկասուն մանուկների, որոնք դառնում են վերև յիշուած ջահէլի հօգսի գլխաւոր առարկան. այնուհետև ճանապարհը ջահէլի փշոտ է. մեծ ջանք է հարկաւոր որ մաքրի:

Այս այսպէս լինելուց յետոյ, տեսնենք երիտասարդի իւր նշանածին արժանանալու միւս միջոցը ո՞րն է, որը դարձեալ իւր նպատակին է հասցնում. դա նշանածին փախցնելն է, որը նոյնպէս մօդայ է դարձել մեզանում: Ես յարմար եմ համարում մէջ բերել մի քանի օրինակներ աղջիկ փախցնելու, որոնք այս մօտիկներումն են պատահել.

Հայաջուր գիւղում մի երիտասարդ նշանվում է մի աղջկայ վերայ. ինչ ինչ պատճառներից դրդուած աղջկայ ծնողները յետ են կանգնում իրենց խօսքից, և ստիպում են աղջկան միևնոյնը անելու, որպէս զի մերժումն կատարեալ լինի և նշանուած երիտասարդը յոյսը կտրի, աղջկայ ծնողները նորից մի այլ երիտասարդի վերայ են նշանում. սկսվում է հարսանեաց պատրաստութիւնը. երկու բարեկամներն էլ ծախսեր են անում, հակառակ աղջկայ ցանկութեան, և ահա մի երեկոյ նախկին փեսացուն և աղջիկը անյայտանում են և նոր փեսացուին ձգում են տարակուսութեան մէջ. Գիշերը երկու փախստականները ցուրտ եղանակին ոտքով Հայաջուրից գալիս են Քարվանսարայ գիւղերում և այդտեղից գնում գործակալի մօտ, որ երկու սիրող սրտերին սուրբ պսակով միացնի. Մինչ այս մինչ այն՝ աղջկայ տէրերը ձիաները հեծած հասնում են գործակալի մօտ, որ խափանել տան. գործակալը տեսնում է գործը վատ կերպարանք սկսի ստանալ, աշխատում է հաշտացնել. այդ միջոցին աղջիկ և տղայ փախուստ են տալիս Քարվանսարայ վաղօրօք իրենց համաձայնութիւնը տալով գործակալին. Երեք օր փախստականները անյայտ են մնում տանուտէրի հովանաւորութեան ներքոյ, մինչև որ տղայի կողմից աշխատողները պսակի հրաման են առնում:

Աղջկայ կողմից հակառակորդները տեսնելով Քարվանսարայի հասարակութեան պաշտպանութիւնը երկու սիրող սրտերի՝ զինաթափ են լինում, պահուած տեղից փախստականները նոյն գիւղի երաշխաւորութեամբ դուրս են գալի և մտնում եկեղեցին պսակուելու. Հանդէսը շատ շքեղ էր. ամբողջ գիւղը մեծ ու փոքր հետաքրքրութիւնից եկել էին հանդիսատես լինելու մինչև որ սուրբ պսակի խորհուրդը վերջացաւ. Օտար հիւրերը-նորապսակները հարսանեաց արժանի բոլոր պատիւը Քարվանսարացիներից ստանալուց յետոյ, պատուով էլ ճանապարհ են ձգում դէպի Հայաջուր:

Մի քանի ժամանակից յետոյ նոյնանման մի անցք էլ Քարվանսարայում տեղի ունեցաւ. Մաքով նշանուած երիտասարդներից մինը վաղուց հարաբերութեան մէջ է մտնում իւր նշանածի հետ. Այդ բանը արդէն տարածվում է գիւղում որ երկուսն էլ իրար սիրում են. իմանում են և ծնողները և բարեկամները:

Աղջկայ միտքը պարզ իմանալու համար ծնողները ստիպում են որ իրանց յայտնի, սակայն աղջիկը համեստութիւնից չանցկենալու համար լռում է. շատ ստիպմունք, վիրաւորանք են տեղում աղջկայ գլխին որ նա մտքինը իրան սիրածին հանի, որովհետև նրան ուրիշ տղի պիտի տան: Սակայն աղջիկը հաւատարիմ է մնում իրան սիրածին. ծնողները խնդրում են քահանային որ աղջկան խոստովանացնի, որպէս զի հասկանան նրա միտքը.[*] քահանան գալիս է խոստովանացնում, իմանում թէ նրա սիրածը ով է, յայտնում է գիւղական դատաւորներին, տանուտէրին, որ աղջկայ խոստովանաց համաձայն, նրան իւր ծնողների մօտից հեռացնեն ուրիշ տեղ. որպէս որով թէ շինվում և թէ քանդվում է։

---

[*] Օհ, ինկվիզիցիա Քարվանսարայում, այդքան էլ լուսաւորուել կը լինի...

Խմբ.

Ո՞րն ենք կամենում. շինել թէ՞ քանդել։

Բայց կարելի՞ է արդեօք խաւարի մէջ, խաւարի արտադրած միջոցներով շինել։ Ո՛չ, խաւարի մէջ, խաւար միջոցներով միայն քանդել կարելի է։

Ուրեմն զարթեցէք, դո՛ւրս եկէք խաւարի աշխարհից, բա՛ց արէք ձեր աչքերը... և լուսոյ պայծառ և ջերմ ճառագայթների տակ շինեցէք։ Աստուած, որ մեզ համար լոյսը ստեղծեց, կամեցաւ, որ մենք լոյսին հետևենք։

Եթէ մենք լոյսին հետևենք, Աստուած էլ մեզ հետ կը լինի. իսկ ում հետ Աստուածն է, նրա գործն յաջողակ է։ Յաջող ընտրութեան հետևանքն—լոյս է, անյաջողին—խաւար. լոյսը՝ շինութիւն է, խաւարը՝ աւերումն...

Ուզում էք քնել, թէ ուզո՞ւմ էք զարթնել. ժամանակ է։

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ.—Գ. Կ. Ե. հաղորդում է մեզ. Յունվարի 13-ին տեղի ունեցաւ հայ ուսանողական ժողովի առաջին նիստը։ Թատրոնական մասնաժողովի հաշուից մենք իմացանք, որ այս տարի ժողովը զուտ արդիւնք է ունեցել ներկայացումից 200 ռ.։ Թատրոնական մասնաժողովի գեղծումների *) վերաբերութեամբ ժողովը գտաւ նրանց գործողութիւնները հակառակ կանոնադրութեան և դրա ոգուն և վճռեց (համարեա միաձայն. 24 ձայն 3-ի դէմ) հրապարակաւ դժգոհութիւն յայտնել մասնախումբի երեք անդամներին՝ Ս. Թաղիանոսեանին, Ն. Ամատունուն և Կ. Սորոլեվին։ Մենք շնորհաւորում ենք ժողովին, որ նա հաւատարիմ մնաց ուսանողութեան այն սուրբ սկզբունքներին, առանց որոնց խորհուրդ չունի ժողովի գոյութիւնը։ Պէտք է ասել, որ մասնաժողովի այդ տեսակ վարմունքից ուսանողական ժողովի չորս անդամները զրկուեցան և այն չնչին օժանդակութիւնից, որ նրանք ստանում էին ժողովի աղքատիկ գանձարանից։

—

ՇԱՄԱԽՈՒՑ.—Անցեալ ամսոյ 31-ին Թեմական դպրոցի դահլիճում կատարուեցաւ „Վարդանանց“ տօնը։ Ներկայ էին աշակերտները և աշակերտուհիները, ուսուցիչները, Թեմիս առաջնորդը և այլ պարոններ ու մի քանի տիկիններ։ Կարդացուեցան ճառեր, ոտանաւորներ, երգուեցին երգեր։ Հանդէսը բաւականին լաւ էր. հանդիսականները ուրախ սրտով ցրուեցին, շնորհակալութիւն յայտնելով դպրոցի վարչութեանը։

—

ՆՈՅՆ ՏԵՂԻՑ.—Ամսոյս մէկին, ուրբաթ օրը, հայ թատրոնասէրների խումբը կլուբի դահլիճում մի ներկայացումն տուաւ յօգուտ օրիորդական դպրոցին. խաղացին „Ժլատ“, „Կըռթ կըռթ“ և „Խէչոյի Թուղը“. խաղը բաւականին յաջող անցաւ։ 35 րուբլի ծախքը դուրս եկած զուտ արդիւնք մնաց 95 րուբլի։

Չենք կարող չ՚յայտնել մեր անկեղծ շնորհակալութիւնը մեծ. պ. Աղէքսանդր Լալայեանցին, որի աջակցութեամբ տոմսակները յաջող ցրուեցան և որի խրախուսանօք սիրողները խոստացան մի ներկայացում ևս տալ։

—

ՆՈՅՆ ՏԵՂԻՑ.—Անցեալ ամսոյ 26-ին Մատրասայ ծխական դպրոցի ուսուցիչները աջակցութեամբ քաղաքիս երկսեռ դպրոցների ուսուցիչ պ. Յ. Ճ.—ի տուին ներկայացումն յօգուտ նոյն դպրոցի։ Անտրակտներում, պ. Ճ. Գամար-Քաթիպայից կարդաց ոտանաւորներ։ Զուտ արդիւնք եղաւ 80 րուբլի, իսկ ծախք 21 րուբլի։ Երանի որ մեր գիւղերը օրինակ վերցնէին Մատրասացից։

—

Կիւրակի փետրվարի 10-ին, ինչպէս մեզ հաղորդում են, կը կատարուի Վերայի Նորաշէն կամուրջի հանդիսաւոր բացումը։

—

Վերջերումս Բաքուում և Աստրախանում տօնավաճառ բանալու խնդիրը շատ զբաղեցնում էր այդ երկու քաղաքի բնակիչներին։ Ի հարկէ Աստրախանցիները ուզում էին որ տօնավաճառ իրենց քաղաքում նշանակուի. Բաքուցիներն էլ իրենց քաղաքն էին աւելի յարմար համարում տօնավաճառի համար։ Ինչպէս երևում է այդ խնդիրը շուտով կը ստանայ իւր լուծումը։ Պետերբուրգից „Астрахан. Листокъ“ թերթի ստացած մասնաւոր տեղեկութիւնից երևում է, որ այդ խնդիրը կը որոշուի ի նպաստ այդ երկու քաղաքների, այսինքն՝ տօնավաճառ կը նշանակուի այդ երկու քաղաքներումն էլ։

—

Եթէ „ՆորԴար“-ի յարգելի բաժանորդներից մի որև է մէկը իւր ժամանակին չէ ստանում, խնդրում ենք անյապաղ յայտնեն խմբագրութեանս, որ նա պօստային վարչութեան յայտնէ այդ մասին, որովհետև խմբագրութիւնը իւր կողմից ամեն հարկաւոր ջանք գործ է դնում ճշտիւ և իւր ժամանակին հասցնելու համարները ըստ պատկանելոյն։

—

Կ. Պոլսի «Հայրենիք» թերթին գրում են Զմիւռնիայից.—Սպարթալեան Վսեմ. հարազատաց շնորհիւ կառուցեալ ազգային հիւանդանոցի հիմնարկութեան վեցերորդ տարեդարձն այսօր շքեղութեամբ կատարեցաւ հիւանդանոցին մէջ ի ներկայութեան Գեր. Մելքիսեդեկ Սրբազանի, Սպարթալեան Վսեմ. Յովհաննէս էֆէնտիի, խնամակալուհի Տիկնանց և այլ բազմաթիւ պատուաւոր երկսեռ ազգայնոց։ Առաւօտուն հիւանդանոցի մատրան մէջ Ս. պատարագ մատուցուեցաւ վասն հոգւոյ հանգուցեալ Յակոբ էֆ. Սպարթալեանի և ապա թափօրը գնաց հիւանդանոցի սեղանատան ընդարձակ սրահն, ուր Հոփսիմեան վարժարանէն երկու աշակերտուհիք և Մեսրոպեան վարժարանէն երեք աշակերտք զանազան ճառեր արտասանեցին, ընդմիջմամբ քաղցրանուագ երգոց։ Ապա, տեղւոյս բարեխնամ առաջնորդ Գեր. Մելքիսեդեկ Սրբազան, որ հանդէսին կը նախագահէր, հակիրճ այլ սրտառուչ բանախօսութիւն մ՚ըրաւ, մարդոց տարբեր պայմանաց մէջ ծնելով՝ իրարու օժանդակութեան բնաւ պէտք ունենալու բարոյական սկզբան վրայ, և Վսեմ. Սպարթալեան եղբարց մեծագործութիւններն հռչակեց։ Սպարթալեան Վսեմ. Յովհաննէս էֆէնտի՝ Առաջնորդ Ս. Հօր և ուսանողաց յայտնած երախտագիտական ըզգացումներէն յուզեալ՝ շնորհակալութիւն յայտնեց առ ինքն յայտնուած երախտագիտական բուռն զգացմանց համար և մասնաւորապէս ջերմ շնորհակալութիւն յայտնեց Մուրատեանց Սրբազանի, և կրկին կրկին բարեմաղթեց որ Աստուած տակաւին բազում տարիներ Ն. Գերապատուութեան հովանաւորութեան ներքև պահէ Զմիւռնիոյ Հայ հասարակութիւնն։

Սպարթալեան էֆ. գլխաւորապէս յիշեց թէ, Գեր. Մելքիսեդեկ Սրբազանի օրով միայն Զմիւռնիոյ մէջ այնքան մեծ գործեր կատարուած են. հիւանդանոց շինուած է, դպրոց կառուցուած է, ազգային շատ մը բարեկարգութիւններ կատարուած են, կանոնաւոր ժողովներ և վարչութիւններ կազմուած են և այլն. և այլն։ Ի վերջոյ մաղթեց որ Զմիւռնիոյ Հայք ընդ երկար բարիքներ և օգուտներ վայելեն Առաջնորդին հովուական հսկողութեան ներքև։ Յաւարտ հանդիսին, Սպարթալեան էֆէնտին և Ս. Առաջնորդը մէկ կառքի մէջ նստած՝ մեկնեցան ի ձայն ցնծութեան և ծափահարութեան խուռներամ ժողովրդեան։

Ասոր բարձր ակմբոյ մէջ խորհուրդ կայ աղջկանց վարժարանին նման փառաւոր վարժարան մը կանգնելու տղայոց համար, և այս խնդրին ուրիշ ամեն խնդիրներէ աւելի գրաւած է Ս. Առաջնորդին ուշադրութիւնը։ Զմիւռնիոյ մեծահարուստ ազգայինք մտադիր են օգնել Գեր. Առաջնորդին սոյն բաղձանաց իրականացման։

Գ.

ՎԱԶԻ ԲԱԶՄԱՑՆԵԼԸ.

Վազը կարելի է բազմացնել կորիզով, կտրօնով, դաշտաւթաղ անելով և պատուաստով։

Ա. Կորիզը [illegible] Թէև բոյսեր բազմացնելու գլխաւոր մի միջոցն է կազմում, սակայն վազի համար այդ անգործնական է, ինչու որ կորիզը ինչքան էլ ընտիր խաղողից ստացած չը լինենք և լաւ պայմանների մէջ մշակած, այնուամենայնիւ նա մայր վազի յատկութիւնից հեռանում է և շատ ստոր տեսակ պտուղ արտադրում։ Բայց այս կորզով բազմացնելը երկար ժամանակ և մեծ խնամք է ուզում (նա միայն 8—10 տարին է պտուղ տալիս)։ Մի դէպքում միայն լաւ է կորզով բազմացնելը, երբ ուզում ենք վազի մի նոր տեսակ առաջ բերել։

Բ. Կտրօնով (ծալամ, չուբուխ) բազմացնելը ամենապարզ և ձեռնտու եղանակն է։ Այս ձևով բազմացնելը մի քանի եղանակներ ունի, որոնցից գործածականները են՝ պարզ կտրօն, բարդ կտրօն և արմատաւոր կտրօն։

1) Պարզ կտրօնը վազի մի տարուայ ոստը կամ բարունակն է, որ այգեկութից յետոյ աշնանը կամ թէ գարնանը կտրում ենք մօտ կէս գազ երկարութեամբ և տնկում կամ ուղղակի այգում և կամ թէ տնկանոցում (շիթլյաղում)։ Կտրօնը իւր շատ առաւելութեանց հետ այս անյարմարութիւնը ունի, որ մաշուած կամ թէ թեթև հողի մէջ շատերը արմատ չեն բռնում և սխալուած ենք լինում տեղը նորերը տնկել, որով վազերի մէջ անհաւասարութիւն է ընկնում և շարքերի մէջ անկանոնութիւն։

2) Բարդ կտրօնը նոյնպէս վազի մի տարուայ ոստն է, բայց իւր տակից երկու տարուայ ոստի կտոր ունի կապած ճիւղ կամբալի ձևով, որ շատ նպաստում է շուտով արմատներ ձգելուն, մանաւանդ եթէ ներքևի երկու կոճակների (աչքերի) մէջ ընկած փայտի կտորն դանակով կամ եղունգով երկու կողմից խազում ենք։

Միջին Ֆրանսիայում մենք բաղդ ունեցանք տեսնել և մի նոր սիստեմ իբրեն հեղինակի մօտ։ Այդ սիստեմը կայանում է սրա մէջ. ընտրում են այնպիսի վազ, որ պակասը վրան երկու ճիւղ ունի և ամեն մէկը 3—4 ոստերով։ Կտրում են այդ ճիւղերից մէկը և նրա ոստերից, որը աւելի զուարթ է մօտ արշին երկարութեամբ պահում, իսկ մնացածները 3—4 աչքից յօտում (կտրում)։ Այդ ճիւղը իւր ոստերով թաղում են առաջուց պատրաստած և պարարտացրած փոսի մէջ, այն ձևով, որ զուարթ ոստը վերն է ուղղվում և գետնից երկու աչք դուրս միայն պահած աւելը կտրվում, իսկ մնացածները փոսի այլ և այլ կողմերը ձգվում դէպ ներքև, այնպէս որ հաւի չանչի կերպարանք է ստանում։

Այս ձևի առաւելութիւնը սրա մէջն է, որ ոստերի աչքերից որոնք թւով 12—16-ի են հասնում բազմաթիւ արմատներ են դուրս գալիս, հետևաբար և շատ սնունդ հասցնելով վազին մի երեք տարում այն աստիճան աճեցնում, ինչ որ ուրիշ եղանակաւ վեց տարում չէր կարող հասնել։

Միայն այս վնասը ունի այգետէրը, որ կտրելով վազի մի ճիւղը նա պտուղից զրկվում է մի երեք տարի, այնինչ պարզ և արմատաւոր կտրօնը իրեն այդ կորուստը չեն պատճառում։

Արմատաւոր կտրօնը, նոյն իսկ պարզ կտրօնն է. բայց ոչ թէ ուղղակի այգում տնկած, ինչպէս անում են մեզանում, այլ նախ՝ տնկանոցում պահած արմատ բռնած, որտեղից հանում փոխադրում են այգին։ Տնկանոց պահել մեզանում դժբաղդաբար դեռ չէ ընդհանրացած, ուստի մենք համառօտ ծանօթացնենք ընթերցողին նրա էութեան հետ։

Տնկելը և նրա խնամատարութիւնը։ Աշնան երբ վազերը կտրում են, նրա ծալամներից ընտրում են զուարթները և կէս գազ երկայնութեամբ կտրօններ պատրաստում։ Որպէս զի դրանք թարմ մնան և չ՚փչանան հարիւր հարիւր կապում են և տանում նկուղնատունը կամ եթէ ցրտահարութեան երկիւղ չը կայ դրսում աւազի մէջ թաղում։

Գարնանը պարտիզի կամ այգու մի անկիւնում չոր ու խոնաւ տեղ որ փորած, աղբով լաւ պարարտացրած ու հարթած պիտի լինի, մօտ 8 վերշոկ խորութեամբ ակօսներ են բացանում, և կտրօնները թեք դիրքով մէջը տնկում, մէկի մէկից 1—2 վերշոկ հեռի և աղբախառն հողը տակը լցնելով, ոտով պնդացնում։ Ակօսները շինում են կէս արշին հեռաւորութեամբ վերայ և եթէ տնկանոցը մեծ տեղ է բռնում ամեն 5 ակօսից մի արշին ճանապարհ թողնում անց ու դարձի համար։

Եթէ տնկանոցը չոր հողի վերայ է և տաք կլիմայի տակ, արևից պաշտպանելու համար կտրօնները մինչև գլուխը հողով պիտի ծածկել։ Մայիսին տակները պիտի փորել և ամառուայ շոգերից պաշտպանելու համար խաղեմով (չոր տերև) կամ յարմար բանով մի վերշոկ հաստութեամբ ծածկել, եթէ ջրելու կարողութիւն ունի ջրել և տակը բուսած ժանգալները քաղհան անել։

Առաջին տարին, այսպէս տնկած կտրօնը շիւ է ձգում, որ տերևը թափելուց յետոյ պիտի կտրել և միայն գետնից դուրս մի աչք պահել։ Եթէ նկատելի է որ շատերը թոյլ են մնացել կամ արմատ չեն բռնել, պիտի հանել և լայն տեղ տալ միւսներին։

Արմատաւոր կտրօններին լաւ է թողնել և երկրորդ տարին, որ աւելի ամրապնդուին, դրա համար նոյն խնամքը պիտի տանել, ինչ որ առաջին տարին, միայն այս անգամ ամենից զուարթ ոստի վերայ ուշ դարձնելով, վազի ուժը կեդրոնացնել նրա վերայ, իսկ մնացածները յօտել։

Մի անգամ երբ մեր կտրօնը արմատ բռնեց, այնուհետև զգուշութեամբ հանելով կարելի է փոխադրել այգին և մեր ուզած կարգով տընկել։ Արմատաւոր կտրօնով այգի ձգելը աւելի [illegible] և ձեռնտու է, քան թէ ուղղակի այգում կտրօն տնկելը, որ աւելի մեծ տարածութիւն բռնելով տասնապատիկ աւելի ծախք է պահանջում։

Գ. Դաշտաւթաղ անելը (նիւգանդայ գցել) կայանում է նրա մէջ, երբ ուզում են հին վազի օգնութեամբ մի նոր վազ դուրս բերել շարքի մէջ եղած պակաս տեղը լցնելու համար և կամ թէ չէ շատ հին վազը նորոգելու։ Այս երկու նպատակի համար գործ են դնում հետևեալ միջոցները։ Վազերը աշնանը կամ թէ գարնանը յօտելուց՝ պակաս տեղերի մօտ եղած վազի վերայ մի զուարթ ոստ են պահում և [illegible] կամ ամբողջ վազի տակից մի փոս փորում և հասցնում մինչև պակասած տեղը։ Այդ փոսի մէջ պառկեցնում են պահած ոստը (առանց կտրելու հին վազից) և ծայրը գետնից դուրս բե-

---

վի գործը տխուր կերպարանք չը ստանայ, այդպէս էլ անում են. յանձնվում է աղջիկը իւր մօտիկ բարեկամներին։

Մինչ այս մինչ այն՝ ծնողները աղջկայ շփոթութեան մէջ են ընկնում և միջոցներ են որոնում աղջկան նրանց ձեռքը գցելու, որ և յաջողվում է։ Նախապատրաստուած ծնողներն, բարեկամները խորհրդով, որոնք բոլորն էլ աղջկայ կամաց հակառակ են լինում մի մութ երեկոյ աղջիկը անյայտանում է մօր ձեռով։ Տասը ձիաւոր Սև քար անուանեալ գիւղից, որոնց հետ նաև աղջկայ հակառակորդ բարեկամներից՝ բռնի կերպով քարշ են տալիս դէպի Սև քար. աղջիկը իւր բոլոր ույժով գոռում գոչում է, սակայն միայն գիշերուան մթութեան մէջ ձայնը խեղդվում է, ոչ մի օգնող, ոչ մի սիրող սիրտ նրան չէ լսում։ Բռնաւորները հասնում են գետին. աժդահաներից մինը աղջկան շալակում է. գետի մէջ տեղը աղջիկը նրան թափահարում է և ընկնում գետի մէջ խեղդուելու նպատակաւ, բայց դարձեալ ջրից հանվում է. սաստիկ ցուրտը, ջրից թացութիւնը, երկիւղը չեն ազդում աղջկայ վրայ, և նա շարունակում է թոյլ ույժով մաքառել իւր հակառակորդների դէմ։ Հազար ու մի նեղութիւններով աղջկան հասցնում են այդ գիւղը Սև քար։

Միւս առաւօտը կայծակի արագութեամբ աղջկայ փախցնելը տարածվում է Քարվանսարայում. քահանան, տանուտէրը մտածում են որ աղջկայ անդրդուելի խոստովանութեան հիմա վերայ կարող է վնաս յառաջանալ. տանուտէրը մի քանի՝ մարդիկներով հասնում է Սև քար. այն ժամանակ երբ փախցնող ընկերութիւնը ամեն ջանք, խոստմունք, ընծաներ, գործ են դնում որ աղջկան համոզեն, մտնում է Քարվանսարայի տանուտէրը. աղջիկը ծանօթ պատկերը տեսնելուն պէս ընկնում է նրա գիրկը ասելով—«ազատիր ինձ». տանուտէրը հանգստացնում է աղջկան, ասելով որ շուտով կը լինես քո ուզած տեղը։ Այդ բարեկամաբար խօսակցութիւնը վերջացնելուց յետոյ, որպէս զի վատ կերպարանք չը ստանայ, դուրս են գալիս աղջկայ հետ դէպի Քարվանսարայ և երեկոյեան դէմ նշանած (մօքով) տղան արդէն իւր սիրած և հաւատարիմ աղջկայ հետ կանգնած էր սուրբ սեղանի առաջ ձեռք ձեռքի տուած։

Պակաս հանդիսաւոր չէր և այս օրը Քարվանսարայի համար. մեծ ու փոքր ջահերով և ընդհանուր պարով առաջնորդում էին նորապսակներին դէպի իրանց բնակարանը. գուցէ շատ շատերը երանի էին տալիս դրանց և ասում թէ երբ կը լինի մենք էլ արժանանք *)։

Ա. Ս.

Քարվանսարայ։

---

*) Որոնց մասին ես արդէն գրել էի ձեզ։

*) Լաւ է, որ գոնէ մեր երկրի գիւղական կեանքը զուրկ չէ ռօմանտիզմից. քաղաքում ամէն բան-պրօզա է։ Ո՞րտեղ է սէր, ինչ ձիաներ, ո՞վ է գետովն անցնողը, ջուրն ընկնողը, և ո՞վ է գժուել, որ աղջիկ փախցնի. քաղաքումն ասում են փող տուր, իսկ յետոյ կը պսակուեն և այն ժամանակ կը սկսի կատարեալ պրօզան։ Խմբ.

րում երկու աչք թողած աւելը կըտրում։

Ամառը այդ երկու աչքից երկու ոստեր են բացվում և միևնոյն ժամանակ գետնի մէջ թաղուած աչքերից արմատներ դուրս գալիս։ Յաջորդ տարին հին վազից կտրում են դաշտաթաղ արած ոստը, որով նա այնուհետև ապրում է իւր հիւթերն։ Երկրորդ ձևը դաշտաթաղ անելու այդ լինում է ամբողջ վազով։ Դրա համար նոյնպէս մի երկար 4—6 վերշոկ խորութեամբ կամ աւելի փոս են փորում, ամբողջ հին վազը պառկեցնում մէջը և միայն երկու կամ աւելի ոստեր գետնից դուրս բերում, մէկը հին վազի տեղը, միւս նրանից հեռի. իսկ մնացած մանրիկ ոստերը 3—4 աչքից կտրած և կոճղը (քեօթուկը) ծառայում են իբրև արմատ։ Դաշտաթաղ անելուց փոսը պարարտացրած պիտի լինի և տարուայ ընթացքում հարկաւոր խնամքը տարած։

Դաշտաթաղով նոր այգի տնկելու համար, վազի բազմացնելը, չէ գործադրվում, ինչու որ թէ շատ ժամանակ է խլում և թէ թանգ նստում, դա միայն լաւ է ինչպէս ասացինք հին վազերը նորոգելու և շարքերի մէջ պակասածների տեղը լցնելու։

Դ. Պատուաստելով (ղալամ անել, մաստ դնել) վազի բազմացնելը կամ նոր տեսակներ առաջ բերելը մեզանում անգործադրելի է դեռ և հարկ էլ չկայ պէտք է ասած։ Պատուաստելը որ գործադրվում է հարաւային Ֆրանսիայում այդ ֆիլօքսերայի դէմն առնելու համար է. ինչու որ ֆրանսիական վազը աւելի քնքոյշ լինելով արմատները շուտով փչանում են այդ պարազիտ միջատներից, այն ինչ ամերիկա՛կանը բաւականին դիմացկան է և ազատ է մնում այդ հարուածից. դրա համար էլ ֆիլօքսերայով փչացած այգիների տեղը այժմ տնկում են ամերիկական վազերը պարզ կտրօնով կամ արմատաւոր և մի երկու տարուց յետոյ վրան պատուաստում բուն ֆրանսիականը։

Պատուաստելը լինում է վազը ջուր ընկնելուց առաջ այն է փետրուար, մարտ և ապրիլ ամիսներին նայելով կլիմայական պայմաններին։

Պատուաստելու եղանակները շատ են և բաւականին դժուար ըմբռնելու առանց իրենց պատկերի, որ ծրագրի էջերում անկարելի է զետեղել, ուստի մենք ակամայ բաց ենք թողնում, դրանց մասին խօսելը վերապահելով ուրիշ անգամի։

Կ. Կ. Մելիք-Շահ.

Մոնպելիէ,
6 փետրուարի 1885։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ։ «Նոր-Դար»-ի 203 համարում եղած նկատողութիւնք մեր Թեմական Դպրանոցի մասին առիթ տուաւ ինձ հետևեալն գրելու։

1878-80 թուականներին մեր խումբ խումբ կուսակցութիւնների մէջ բազմատեսակ վիճաբանութիւններ էին լինում, թէ մեզ ո՛րպիսի վարժարան է հարկաւոր և ո՛րպիսի ուղղութեամբ։ Ոմանք ասում էին ռէալական է հարկաւոր, ոմանք կլասիքական, ոմանք հոգևոր սեմինար և ոմանք—ամենը միասին մի դպրոցի մէջ և այլն։

Այդ վէճերի միջոցին մեր ունեցած հոգևոր դպրոցը պիտի փոխարկուէր Թեմական հոգևոր Դպրանոցի, որի կանոնադրութեան հաստատելուն տէրութեան կողմից ամենքն սպասում էինք։ Բազմութեան ձայնը առաջուց այսպէս էր, որ երբ այդ Թեմական Դպրանոցը հաստատուի, այնուհետև մեզ մի ուրիշ ուսումնարան հարկաւոր չի լինել, և մենք ինչ կերպ ծրագիր որ ուզենանք, այն էլ կը մտցնենք դրա մէջ, իսկ հաստատութեան ունենալ պատիւ մարդիկն, որոնք գործի գլուխ էին կանգնած, միայն իրենց զաւակների համար մտածելով, կամենում էին այնպիսի մի դպրոց, որի միջից աւարտող աշակերտներն ճանապարհ ունենային դէպի համալսարանն և բարձրագոյն ուսումնարանները. դրանք չէին մտածում հասարակ ժողովրդի զաւակների մասին...

Դպրանոցը բացուեցաւ և դրան տուին խիստ կլասիքական ուղղութիւն, առանց ի նկատի առնելու այն կանոնադրութիւնը, որ յօրինուած էր հանգուցեալ վեհափառ կաթողիկոսից և հաստատուած ի տէր հանգուցեալ Կայսերից։ Ո՞վ որ չը մտածեց, թէ արդեօք իրաւունք ունէինք մի կողմ ձըգելու այդ հիմնական կանոնադրութիւնն և հնարելու վինէգրեթի նման մի նորաձև կամ „նորատեղծ“ ծրագիր, ինչպէս որ ասում է „Նոր-Դար“-ը, այլ կարծեցին, թէ հասարակութեան կամքը կատարուած է և թէ ծրագիրը յարմար է մեր հանգամանքներին։

Այժմ հասարակութեան խելքը աւելացած կարելի է համարել և փորձով տեսնում է, որ սխալուած էր։ Նայելով մեր Նախիջևանցի հայերիս զաւակների ընդունակութեանը, և տեսնելով, որ հարիւր աշակերտից իննսուն հինգն ընդհանրապէս ուսումնարանի երրորդ կամ չորրորդ դասարանից հեռու չեն գնում, իսկ հինգ % միայն կարանում են բարձրագոյն ուսումնական դպրոցներ մտնել, մենք այժմ մտածմունքի մէջ ենք ընկած, թէ ուրեմն 95 միջակ ընդունակութեան տէր երեխաներին լատինական և յունական մեռած լեզուներով չարչարելը միայն հինգ քանքարաւոր գլուխներ վաստակելու համար,—խելքի պակասութիւն է և ո՛չ թէ օգտակար չէ մեր դրութեանը, կեանքի պայմաններին և տեղական հանգամանքներին, հապա և շատ ու շատ վնասակար։ Այո, ծիծաղելի է, որ 95-ը՝ 5-ին զոհ գնայ։

Այս խոշոր սխալմունքի յանցանքը ո՞ւմ վերայ է ընկնում։—Ամենքիս վերայ։ *) Ուրեմն խոստովանենք, որ սխալուել ենք և աշխատենք ուղղուել, քան թէ յամառել սխալի մէջ. ժամանակը թռչում է։

Այժմ հարկաւոր է մեզ և պարտական ենք հոգալ, որ մեր Թեմական Դպրանոցը ոչ մի քայլ չը շեղուի Բարձրագոյն հաստատուած կանոնադրութիւնից։ Եւ հոգևոր իշխանութեան պարտքն է՝ հրամայել Դպրանոցի վարչութեանը, ամենայն ճշտութեամբ ի գործ դնել այդ կանոնադրութիւնը ինչպէս մի օրէնք։

«Նոր-Դար»-ի ասածն, թէ Դպրանոցի այժմեայ ծախքն 16,592 մանէթ, (այս էլ միայն երեք դասարանների վերայ նախակրթարաններով հանդերձ) համապատասխան չէ առած արդիւնքին, շատ ճշմարիտ է. մենք էլ այդ վաղուց գիտենք և տեսնում ենք, որ դրա կիսովն էլ կարելի էր այդպիսի արդիւնք ստանալ, եթէ դպրանոցի վարչութիւնը խիղճ ունենար...

Ց. Պ.

ԲԱԹՈՒՄ, 30 յունվարի. Դէպի եկեղեցին այժմս ամեն տեղ էլ այն սոսկման սառել են, որ շատերի սրտից բարեպաշտութեան և այլ կրօնական զգացմունքներն կարծես թէ իսպառ անյետացել են։ Այդպիսիների համար հիմայ՝ պաս պահելը, աղօթք անելը, ժամ գնալը, հաղորդուելը և այլն այնպիսի մի թեթև նշանակութեան բաներ են դարձել, որ եթէ դրանք այդ ամենը հազարից մի անգամ անում են, իսկ ենքն էլ պարծենում են, որից դուրս է գալիս, որ այդպէս վարվողները, իսկապէս աւելի անտարբեր են այս ու այն եկեղեցուն պատկանում։ Ահա այդպիսի մի տարօրինակ հաւատացեալներից (քրիստոնեաներից) մէկը, որ մի խեղճ ռուսական հայ կաթոլիկի ամուսին է լինում, մօտ օրերս վախճանուելով պաստօր՝ զրկուեցաւ իւր եկեղեցու ծէսով թաղուելուց, ինչպէս ասում են, այն պատճառով, որ դա տարիներով ապրելով երբ թէ մինչ չէ հաղորդուած եղել և ոչ էլ ժամ գնում. մինչև անգամ մահից առաջ էլ չէ հաղորդուել և այդ ժամանակ իւր մօտ գնացող կաթոլիկ վարդապետին, ասում են դուրս է արել։ Այդ ամենը, որ արդարև շատ ծանր մեղքեր են, հայր սուրբ վարդապետը համարում է մինչ այն աստիճանի ծանր յանցանքներ, որ իրաւունք է տեսնում իւր մեռելին չը թաղել և չէ թաղում (շատ հետաքրքրական է իմանալ, գոնէ մեզ համար, թէ արդեօք այդ բանը եկեղեցական ո՞ր կանոնների հիման վերայ են արել *). Այդ գործը մի քանի օր այս ու այն կողմ քաշքշելէն յետոյ՝ մեռելին յօժարում է թաղել ռուս քահանան, որ և թաղում է, և այդպէս այդ մեղապարտ անշունչ դիակի գլխին եկած խալապալղն էլ վերջանում է։

Բայց ասողներ էլ կան, որ երբ թէ հանգուցեալը վարդապետին վռնդել դուրս է արել։ Հայր սուրբը մահամերձ հիւանդի այդ վարմունքից, ասում են, սաստիկ նեղացել է, որ և երբ թէ դա է եղել բուն պատճառը, որ նա իւր մեռելին չէ թաղել։

Եթէ որ դա ճշմարիտ է՝ ապա ուրեմն շատ հետաքրքիր է իմանալ թէ այսուհետև այստեղի հայ կաթոլիկներին արդեօք ո՞վ պէտք է թաղէ, եթէ որ հոգեվարք հիւանդները պատահի որ հայր սուրբին չընդունենն կամ վռընդեն դուրս անեն, որ արդարև մահամերձների հետ դա սովորաբար շատ անգամ պատահում է։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ։ Նոր մաքսային տարիֆի նախագիծը օրերումս Ռէյստագի (գեր. պառլ. ժողով) քննութեանն կենթարկուի։

Հեռագիրը հաղորդեց, ասում է „Journal de St.-Petersburg“ լրագիրը, որ Նիդերլանդների դինամիտական ճայթագործների մահուան վճիռը արդէն կատարուեցաւ։ Պատիժը կայացաւ Հալլում, ժամի 8-ին, բանտի բակումը։ Ռէյնսդորֆը մօտեցաւ պատժական սիւնին դեղնագոյն երեսով, բայց հաստատ քայլերով։ Նա լսեց իւր մահուան վճիռը զարմանալի սառնասրտութեամբ։ Երբ Ռէյնսդորֆը յանձնուեց դահիճի ձեռքը, նա գոռաց՝ «Հեռու բարբարոսութիւնը և կեցցէ անիշխանականութիւնը (անարխիա)։ Մի ակնթարթում նրա գլուխը ընկաւ գետինը և նրա դիակը դրուեց սև դագաղում. Մեղապարտը մերժեց քահանայի վերջին մխիթարութիւնը։ Այն միջոցին, երբ եկան նրան տանելու, նա սկսեց երգել ծխածիգը (սիգարը) ձեռքին՝ «Must sterben, bist noch so jung» (պէտք է մեռնես այդպէս երիտասարդ)։ Կիւխլերը ընդհակառակն բոլորովին մեռած էր երևում... Մինչև վերջին րոպէն նրան պահում էր քահանան։ Նրա աչքերը արտասուքից կարմրել էին. նա մեռաւ առանց մի խօսք ասելու։

—

ԻՏԱԼԻԱ. Խարտումի անկումն շատ վատ տպաւորութիւն գործեց Իտալիայի վերայ. Հակառակ կուսակցութիւնը անխնայ է կառավարութիւնը անողոք պախարակելու պատճառաւ։ «Մենք ամենեքին պարտական չենք, ասում է «Fanfulla» լրագիրը, Անգլիայի սխալմունքների դէմը կատարել նրա համար արեան թափելով։ Եթէ մենք անպատճառ կամենում ենք գաղթականական քաղաքականութեան հետևել, մեր վերջնական նպատակը պէտք է լինի միմիայն Տրիպոլիսը։ Կառավարութեան բռնած ընթացքը քաղաքականութեան մէջ պատռում է տէրութեան էական շահերին և Վատիկանի ձեռքում խաղալիք է դառնում»։ Այնինչ ուժեղ շրջաններում այլպէս են նայում, գործի վերայ։ Հռոմից հեռագրում են «Neue freie Presse» լրագրին, որ երբ թէ Անգլիայի հետ կայացած համաձայնութիւնը պարտաւորեցնում է Իտալիային քաղաքապահ զօրքեր ուղարկել ոչ միայն Կարմիր ծովի նաւահանգիստները, այլ և նոյն իսկ Կասսալա քաղաքը, որպէս զի կարելի լինի բրիտանական գրաւող զօրքերի համար զօրեղացնել այժմ Սուդանում գործող զօրաբաժինները։ Խարտումի անկումն այն աստիճան փոփոխեց իրերի դրութիւնը, որ Անգլիան հարկադրուած պէտք է ազդու միջոցներ գործ դնէ պատերազմին վերջ տալու համար. բրիտանական զինուորական կազմակերպութիւնը դժուարացնում է զօրքերի ռազմական պատրաստականութիւնը, ուստի այսպիսի հանգամանքներում Իտալիայի մասնակցութիւնը կարող է ազատել Անգլիային շատ դժուար դրութիւնից։

ԱՒՂԱՆԻՍՏԱՆ։ Պետերբուրգից „Times“-ին հեռագրում են փետրուարի 5-ից, որ Լեսսարը, Աւղանիստանի սահմանը որոշող յանձնաժողովի երկրորդ անդամը, անակնկալ ուղևորեց Լոնդոն փոխանակ Թիֆլիս գնալու, ինչպէս առաջ ենթադրութիւն կար, և այժմ, երևի, իւրեն տեղումն է գտնվում։ Լեսսարին հրամայուած է գնալ Լոնդոն ռուսաց դեսպանի մօտ, որպէս զի նըրան օգնի Անգլիայի արտաքին գործոց մինիստրութեան հետ համաձայնութիւն կայացնելու Ռուսիայի պահանջած Աւղանիստանեան նահանգի ժողովրդագրական սահմանը որոշելու համար։

Այս տարաձայնները, կարդում ենք „Times“ անգլիական մեծ թերթում, պարզ ապացոյց են Գլադստոնի քաղաքական անհեռատեսութեան։ Մինչև այժմ չէին եղած ոչինչ կանխատես բանակցութիւններ յանձնաժողովի առաքելութեան մասին և միայն հիմայ, երբ նրա մի մասը արդէն գտնվում է նշանակած տեղում, հիմա է հարկաւոր լինում բանակցել, որովհետև Ռուսիան կամք չի ցոյց տալիս առաքել և իւր յանձնաժողովը առանց առաջուց համաձայնութիւն կայացնելու մի քանի նախընթաց հարցերի մասին։ Սրանից մենք կարող ենք դատել, որ մեղաւորութիւնը պ. Կ. Լըմզդենի տարաժամ առաքելութեան և Ռուսիայի անկամաւորութեան՝ լիովին Անգլիայի կառավարութեան է պատկանում, ըստ որում ենթադրում էր թէ կարելի կը լինի իւր տեղումը քննել մի քանի մանրամասնութիւններ, որոնց Ռուսիան ամբողջ ժամանակ պահանջում էր առաջուց վճռել Պետերբուրգում և Լօնդօնում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ռոստով քաղաքից գրում են հետևեալը „Недѣл.“ լրագրին. „9 դեկտեմբերի, ժամի 9-ին երեկոյեան, մի կին 35 տարեկան, իւր փոքրիկ քեռորդու հետ խանութից տուն վերադառնալով պատահեցաւ հարբած մարդոց մի խմբին։ Այդ խումբը, որ բոլորն էլ երիտասարդներից էր բաղկացած [illegible] «Պարապարվելի» [illegible]։ Քեռորդին մի քանի տասնեակ հարուած տանելով կարողացաւ նրանց ձեռքից դուրս պրծնել և փախաւ։ Առաւօտը դժբախտ կնոջը ոստիկանութիւնը գտաւ մեռած՝ այգու ամենախուլ խորքումը, հին թաքէ փորուածքում։ Նրան գտան լոկ մի շապկում, արիւնաթաթախ. նրա վերարկուն ընկած էր այնտեղ, բոլորովին կտոր կտոր արած, կարծես թէ „շներից“ գզգզուած լինէր։ Դատարանական քննիչը գտաւ մեղապարտներին և բոլորին էլ կալանաւորեց“։

* * *

Սուս մարդարէն Մահդին՝ ունի իւրեն առանձին արտաքին գործոց մինիստր,—դա է Օլիվիէ Պէնը—մի ֆրանսիացի պարոն։ Փարիզի լրագիրները տեղեկութիւններ են հաղորդում այս մինիստրի մասին, որին վիճակուած է այժմ նշանաւոր դեր խաղալ քաղաքականութեան մէջ, ըստ որում հեռագիրների խօսքերով նրան է յանձնուած բանակցութիւններ սկսել անգլիացիների հետ։ Դեռ շատ երիտասարդ լինելով Պէնը մասնակցել էր Փարիզի կոմմունայի խռովութիւններին 1871 թ., և վերսալցիների յաղթութիւնից յետոյ, նա աքսորուեցաւ Նումէա, որտեղից սակայն կարողացաւ փախչել Ռոշֆորի հետ միասին Աւստրալիա։ Վերադառնալով Փարիզ կոմմունականներին շնորհուած ընդհանուր ազատութիւնից յետոյ, Պէնը սկսեց աշխատակցել զանազան արմատական և կոմմունական (հանրապետական) լրագիրներին, բայց առանց որևէ յաջողութեան։ Այնուհետև նա մտաւ 1877 թ. տաճկաց զինուորական ծառայութիւնը և Օսման փաշայի հետ միասին պաշարուեցաւ Պլեւնայում և նրան առնելուց յետոյ ընկաւ ռուսաց ձեռքը։ Նա քիչ մնաց որ զոհ գնար արդէն, բայց մի գերմանացի նշանաւոր թղթակցի օգնութեամբ նա կարողացաւ ազատուել։ Անգլիական «Times» լրագիրը սպառնալիք է ուղարկում Պէնին, ասելով եթէ նա անգլիացիների ձեռքն ընկնի, այլ ևս չի պրծնել—նրան կը կախեն։

* * *

Ի հարկէ պէտք է ճաշակ ունենալ ամեն բանում։ Մի երիտասարդ տիկին Սէն-Դալեց 150 ֆրանկով մի բնական դագաղ է գնում այս տարուայ դեկտեմբերի վերջը և ընծայում է նրան իւր մօրը իբրև նոր տարուայ շնորհաւորութիւն։

—

„Goyo Gakuger Zasshi“ ճապոնական լրագիրը հաղորդում է, որ Տոկիոյի համալսարանի պրոֆեսորները ընկերութիւն են կազմել չինական տառերը լատինական տառերի վերափոխելու։

* * *

Մի հարուստ և էքսցենտրիքական ամերիկացի Գա. անունով երդուել էր աւետարանով շատ տարի առաջ, որ առաջին ռամկապետական նախագահը պէտք է իւր բոլոր կարողութեան ժառանգը լինի։ Այսպէս Գրովեր Կլիվլէնդը, Միացեալ Նահանգների նորընտիր նախագահը ստացաւ մօտ 350,000 դոլլար այն պայմանաւ, որ այս գումարը գործածէ յօգուտ ռամկապետական կուսակցութեան։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ „ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

7 Փետրուարի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Սենատի քրէական գործոց վճռաջինջ դեպարտամենտի աւագ պրոկուրորը Նեկլիւդով նշանակուած է վճռաջինջ դեպարտամենտների ընդհանուր ժողովի և առաջին և վճռաջինջ դեպար-

---

*) Ասել՝ թէ ամենքն էլ սխալուել են, դրանով բանը չէ պարզվում. Նրանք, որոնք իրաւունք չունէին սխալուելու սխալին պատասխանատու են։ Խմբ.

*) Մի՞թէ չէք հասկանում, որ կաթոլիկ վարդապետի արածը բոլորովին ուղիղ է, նա որ չէ աղօթում, եկեղեցի չէ գնում, չէ հաղորդվում և իրեն այցելող եկեղեցւոյ պաշտօնեային դուրս է անում—ասել է, որ նա եկեղեցուց դուրս է ուզում մնալ, իսկ դուրսը մնացողին եկեղեցին չէ ընդունում իւր մէջը... սրան ինչ կասէք։ Խմբ.

տամենտների միացեալ ատեանի աւագ պրօկուրոր. իսկ Նիկլի գովի տեղը նշանակուած է Պետերբուրգի դատարանական պալատի դեպարտամենտի նախագահն, Կոնի։

Պետական խորհուրդը վերջացրեց Բարանովի կազմած երկաթուղեաց նախագծի մի մասի վերաքննութիւնը, որ վերաբերվում էր ճանապարհորդների և բեռների տեղափոխութեան։

Օրերումս հաստատուած Վլադիկավկասեան երկաթուղու ընկերութեան կանոնագրութեան համաձայն շարժողութիւնը Նովօրասիկ ճիւղի վերայ պէտք է սկսուի ոչ ուշ քան երկու ու կէս տարի, կանոնագրութեան սկզբնաւորութեան օրից անցած. իսկ երկաթուղու բացման օրից հինգ տարի անցնելուց յետոյ կառավարութիւնը կարող է գնել ընկերութեան ակցիաները և երկաթուղու կատարեալ տէր դառնալ։

«С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ պետական խորհուրդը ցանկանալով գաւառական զեմստվօների ձայնաւորների ընտրութիւնները կանոնաւորել վճռեց՝ 6 հազարից մինչև 15 հազար բնակիչ ունեցող քաղաքներից ընտրել չորս ձայնաւոր իւրաքանչիւր 6 հազարի համար, իսկ յետոյ մէկ ձայնաւոր երեք հազարի համար. գիւղացիներից էլ մէկ ձայնաւոր իւրաքանչիւր 3 հազարի համար, և թոյլ տալ, աչքի առաջ ունենալով միայն միքանի յարգելի պատճառներ, բանալ առանձին ընտրողական երբեմնաժողովներ (съѣздъ) քաղաքների փոխարէն գիւղաքաղաքներում և աւաններում։

Լրագիրները հաղորդում են, որ նաւային աստիճանաւորների և ծովային մասնագիտութիւնների ծովային լողնորդական ցենզին վերաբերեալ նախագծերը, այլև նաւային շտուրմանների և ծովային թնդանօթաձիգ զօրաց առանձին բաժանմունքները աստիճանաբար ոչնչացնելու վերաբերեալ նախագծերը արդէն հաստատուած են պետական խորհրդից։

8 Փետրվարի

ՄՈՍԿՈՒԱ. Սկօպինսկի բանկի գործի առթիւ 18 մեղապարտներ իրեն ժամանակամիջոցին ներկայացրին վճռաջինջ գանգատներ, ի մէջի այլոց և Ռիկովը. չը կամեցան գանգատ ներկայացնել վճռաջինջ ատեանին երեքը, որոնք դատապարտուած են կարճատև աքսորի։ Ռիկովը իւր գանգատաթղթի մէջ յիշում է 12 հատ վճռաջրնջման ստորոգեալ առիթներ, որոնց թիւումն է և նրա հեռացնելը դատարանական դահլիճից։

ՊԵՇՏ. Առևտրականութեան մինիստրը յայտնեց պատգամաւորների պալատին, որ ի նկատի առնելով մաքսային տուրքերի բարձրանալը Գերմանիայում և Ֆրանսիայում, Ունգարիան նմանապէս մտադիր է պաշտպանողական մաքսերին ձեռնամուխ լինել իւր հում արդիւնքների համար հարևան տէրութիւնների վերաբերութեամբ։

ԲԵՐԼԻՆ. Րէյխստագը (գեր. պառ. ժող). վերջնականապէս վաւերացրեց արգելական օրէնքը և դաշտային շաղգամին և շաղգամի սերմին վերաբերեալ մաքսային տարիֆի յօդուածները յանձնեց առաջին յանձնաժողովին ի քննութիւն, իսկ սիմինդրի մաքսը նշանակեց 50 պֆենինգ։

ԼՕՆԴՕՆ. Երեկ նորոգուեցան աշնանը ընդհատուած պարլամենտական նիստերը։ Գրանվիլը յայտնեց լօրդերի պալատին, որ եգիպտական ֆինանսների հարցը չէ վճռուած Եգիպտոսի և Անգլիայի օգտին. Անգլիայի քաղաքականութիւնը Սուդանի վերաբերութեամբ միևնոյն է մնում. յետ կանգնել անկարելի է. Ուօլսլէյին տրուած են կատարեալ լիազօր իրաւունքներ, բայց Խարտումի վերայ կերթայ, ինչպէս երևում է, միայն նոյեմբեր ամսին։ Համայնքների պալատում Գարտինգտոնը յայտնեց, որ անգլիական դիտակ զօրաբաժինը յետ կը դառնայ, երևի, մինչև Մերավ, գլխաւոր ուժերի հետ միանալու։ Նորթկոտը յայտնեց, որ մի առաջարկութիւն կը ներկայացնէ, որով կը պահանջէ պարզել կառավարութեան պատասխանատուութիւնը ձեռնարկած խիստ միջոցներին վերաբերեալ. կայուն դրութիւն հաստատելու Եգիպտոսում և Սուդանի Եգիպտոսին հարկաւոր մի քանի մասերում։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Թիֆլիսի հրապարակի վերայ վաճառահանուող ապրանաց ընթացիկ գները՝

Փետրուարի 8-ին

ՑՈՐԵՆ.—Դուանուկի պուդը	—78 կ.
" Գանձակի "	—70 "
" Շորագալի "	—78 "
" Ղազախի "	—55 "
" Նախու	—70 "
ԱԼԻՒՐ.—Բէլօնով 1-ին	12 ր. — "
Եղբարց Հախվերդեանցների.	
Կարմիր նշան.—00-ի.	11 ր. 50 "
" " 0	10 — 75 "
" " 1	9 — 50 "
" " 2	8 — 50 "
" " 3	7 — 40 "
" " 4	5 — 50 "
" Դուանուկի պուդը	90 "
" Գանձակի "	80 - 85 "
" Շորագալի "	95 "—1 ր.
" Խառն տեսակները	75—80 "
ԳԱՐԻ.—Սպիտակը "	41 "
" Սևը "	42 "
" Գարեջրի համար	60 "
ԲՐԻՆՁ.—Աքուլեաց "	2 ր. 10 կ. "
Պաշարը շատ	
" Նախու "	1 " 40—50 "
" Խառն տեսակները	1 " 25—30 "
ԱՂ.—Իռուսխայի "	50 "
" Ղուլփի "	90 "
" Կապզուանի (գալեր)	—65 "
" " (կտոր)	—50 "
" Բագուայ "	23 "
ԻՒՂ.—Օդեսայի "	11 — "
" Նէժեգօրօդսկի "	12 — "
Մաքուր կարագ	9 ր. — "
ՁԷԹ.—Շիրվանի "	9 ր. 50 "
" Սևի "	4—80 "
" Գեօկչայի "	3 ր. 60 "
" Ձիթապտղի "	10 " 50 "
ՃՐԱԳՈՒ.—Զանազ. տեսակ	4 " 50 "
" Հալած "	5 ր.
ՆԱՒԹ.—Զան. գործած պ.	—32 "
ՄՈՄ.—Կրեստովնիկովի պ.	11 ր. 50 "
Օդեսայի "	չէ կայ
" Տօլլի գործար. "	11 " — — "
ՍԱՊՈՆ.—Տօլ. գործ. 1 տ. "	5 ր. — "
" " " 2 տ. "	3 " 40 "
" " " 3 տ. "	2 " 40 "
" " " Մարմարեօնի	3 ր 50 "
" " " 1 և կէս ֆ-անոց	4 " 50 "
" Բոյանդուր. և ընկ. գործ.	
1 տես պ.	4 ր. 60 "
2 տես. "	3 " 30 "
3 տես. "	2 ր. 40 "
Մարմարեօնի "	3 " 40 "
ԼՈՒՑ Ս. (ստէրկա) Օսիպովի, Կաշիկը	3 " 70 "
" Կրիմովի "	սպառուած
" Կարմիր 300-անոց "	սպառուած
" Կարինեանի "	սպառուած
ՇԱՔԱՐ.—Բրոդսկի պ.	6 ր. 85 Թոյլ
" Գնիլան մեծագլուխ	սպառուած
" " մանրագլուխ պ.	7 ր. 50 կ.
" Չերկիսկի	սպառուած
" Սաբալօվկայ	սպառուած
" Կորտած Ռէլապովկա պ.	6 " 90 "
" Փոշին	6 ր. 70 "
ՇԱՔԱՐԱՒԱԶ.—Օդեսայի պ.	5 " 60 "
ԿԱՐԱՄԵԼ Շապօշնիկօվի	
Մեստի արկղում	7 ր. 60 "
" " փայտի արկղում	6 " 50 "
" Պօլեակօվի	
Մեստի արկղ.	7 " 60 - "
" " փայտի արկղ.	6 " 50 "
ՄԱԿԱՐՈՆ.—Օդեսայի պ.	4 " 20 "
" " Սամարայի	5 " — "
ԿՕՖԷ—Մօքքօ պ.	21 " — "
" Րիօ "	13 " 80 "
ԿԻՆԱՄՈՆ. (դարչին) "	10 " 10 "
ԳՂԳԵՂ.—Սինգափորի պ.	15 ր. 80 "
Պաշարը նուազ	
ԿՈՃԱԳՂԳԵՂ (կոճ).—Սպիտակը պ.	15 " 40 "
" Մոխրագոյնը "	12 " 40 "
" Դեղինը "	6 " 35 "
ԳԱՂԼԵՂ (չէր). "	2 " 10—15 "
ԱՐՋԱՍԳ (Ջալ) "	1 " 40 "
ԾԾՈՒՄԲ (Քուքուրթ) "	2 " 40
ԽՈՒՆԿ.—Սպիտակը "	10 " 20
" Սևը "	6 " 20
ԿԼԱՅԵԿ	15 " 35 " Թո
ՕՇԻՆԴՐ (Նաշադիր)	8 " 40 կ.
ՑԻՆԿ (լեառօլօ) "	5 ր. 20 "
ՊՈՂՊԱՏ.—Մնդուկը	սպառուած
ՍՊԻՏԱԿ ԹԻԹԵՂ. (Ժեստ) "	15 " 70 "
ՁԱՄԻՉ (Սաւզա) քաւկինը պ.	2 " — "
" Մնդուկինը	—2 " 40 "
Պաշարը շատ, չափազանց Թոյլ	
ՆՈՒՇԸ.	10 " 50 "
Պաշարը շատ	
ԿԱՂԻՆԸ (Թլխի) պ.	3 ր. —40 "
ՇԱԳԱՆԱԿ "	1 " 20—30 "
ԸՆԿՈՅԶ	1 ր. 10 "
ՕՂԻՆ.—Առանց տակառի 5 ր. 50կ. %-ը	8½
ՍՊԻՐՏԸ.—Տակառով "	9⅛
ՄՈՐԹ.—Ոչխարի (Մալ. համար) գոյգը	90 կ.
" " (Օղևս. համար) 1 "	10 կ.
Առևտուրը Թոյլ պաշարը շատ.	
" Այծի	1 " 60—80 "
" " (Ընտրովի)	2 " 60 — "
ՏԱՎԱՐԻ կաշին	7ր. 50 կ.
Մարսէյլի Տանրէկս	39 ր. — "
" Շէյսօն	37 " — "
ԲՈՒՐԴ.—Թուշի—վրաց	սպառուած
" Գանձակի	3 ր. 60 կ.
" Գնողները չը կան մինչև անգամ եթէ 3 ր. 50 կ. էլ վաճառուի։	
" Ղազախի	" "
" Շիրա	" "
" Ղարաբաղի	" "
" Նուխու (աշնան)	3 ր. 60—70 կ.
" Խորասանի	սպառուած
ԲԱՄԲԱԿ.—Երևանի	
" " Ամերիկ. սերմից	8 ր.
" " Գարաղեօզի սերմ.	6 ր. — "
ՄԱՆԱԾ	" 9 ր.
ԲՈԺՈԺ Նուխու " չկայ	" —
" Իմէրեթի "	" —
ԹԵԼ.—Կախեթի "	
ԼԱՍ (Փրեզոն) "	
ԸՆԿՈՅԶԻ ՈՍՏՆ.—(Նազլեվ լաւ տեսակը 4—6 ր. ստոր տեսակը 1 ր.—2 ր. Պահանջը աննշան։	
ՈՍԿԻՆ.—Պօլեմպերիալը	7 ր. 85 կ.
" Բաջախլուն	5 ր. 20 "
" Տաճկաց լիրան	8 " 75 "
ԱՐԾԱԹ.—Րուբլեանոց.	1 ր. 36 "
" 20-կոպէկանոց	15 "
ԱՐԺԵՏՈՄՍԵՐ	
ԹԻՖԼԻՍԻ առև տր. բանկի ակցեան	259—260 ր.
" Քաղաքային " "	85—86 "
" Ազնուականների կալուածական բանկի գրաւական տոմսը (Закладной листъ)	—83 "
ՔՈՒԹԱՅԻՍԻ բանկի նոյն տոմսը	85—86 "
ՏՈՄՍԵՐ.—Պետական բանկի 5%	
1-ին շրջանի	100 "
2—5-րդ	99 " 90 "
" Արևել. փոխառութ. 5%	
1-ին	98 " 98 "
2-րդ	98 " 98 "
3-րդ	99 " 10 կ.
" Վիճակահանութեան 5%	
1-ին փոխառութ.	221 ր. — "
2-րդ	215 " 87 "
ԹԷՅ.— Կ և Ս. (К. и С.) Պոպով եղբարց	
1 ր. 40 կոպ.—2 ր. 50-կոպէկանոցի համար զեղչ.	
մինչև 300 ր.	6%
300 — 500 "	9%
500-ից աւել	12%
" Շուկայում մանրաւոր անձանց մօտ բոլոր տեսակների համար զեղչ	%12

Պօպով եղբարց թէյերի վերայ արդէն գոյութիւն ունեցող հին չափաւ կապի (բանդերօլ) պաշարը վերջանալուց յետ, յիշեալ տանը իւր թէյերի գները կաւելացնէ, փունտին 16 կոպէկ, համաձայն իւր յայտարարութեան։

ԾԽԱԽՈՏ.—Կուշնարեվի.	
Պապիրոս.	
1-ին և 2-րդ տեսակի զեղչ.	24—%
3-դ "	19—10%
Թամբաքու.	
2 րուբլիանոցի զեղչ.	17%
1 ր. 20-կոպէկանի "	16 "
" 80 " "	11 "
" 40 " "	8 "
" Ասմօլովի	
Պապիրոս.	
1-ն և 2-րդ տեսակի զեղչ	24%
3-դ " "	12%
Թամբաքու.	
2 րուբլիանոց "	18%
1 ր. 20 կոպէկանոց "	17 "
" 80 " "	12 "
" 40 " "	10 "
" Բոզաջեանցի	
I և II տեսակ "	25%
III " "	20%
ԿԱՐԵՇԿԱ.—Ժուլինի պուդը	6 ր. 60 "
" ըլժախատ "	5 ր. 60 "
" Րեմբինսկոյի " 7 "	50—60 "
ԽԱՂԱԹՈՒՂԹ (կարտ)	5 ր. 70 կ.

Ապրանաց գների վերայ ոչինչ փոփոխութիւն չը կայ։

Խմբագիր հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ։

Նոյեմբերի 1-ից կազմուած ցուցակը շոգենաւերի երթևեկութեան համար մի շաբաթուայ ընթացքում Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի մէջ։

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ Է.

ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը, ժամի 4-ին երեկոյեան, ուղիղ գծով Նովօրոսիսկ և Կերչ քաղաքների վերայ։

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, ժամի 8-ին երեկոյեան, շրջանական գծով ամեն նաւահանգիստների վերայ։

ԿԻՐԱԿԻ օրերը, արտասահմանեան գծով դէպի Կ. Պօլիս։

ԳԱԼԻՍ Է ԲԱԹՈՒՄ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ, կէս գիշերին մօտ, Օդեսայից շրջանական գծով.

ՈՒՐԲԱԹ օրերը առաւօտեան, Օդեսայից ուղիղ գծով Կերչի և Նովօրոսիսկ քաղաքների վերայ։

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, առաւօտեան, Կ. Պօլսից։

Պոստային կառքերի շարժողութիւնը Կովկասի (Թիֆլիս-Վլադիկավկասեան) ճանապարհով։

Կառքեր, որոնք ճանապարհին գիշերելու կայարաններ ունին։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկավկաս գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. մէջ.

Վլադիկավկասից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րոպ մէջ։

Անդրկովկասեան երկաթուղին։

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ „ԹԻՖԼԻՍ" ԿԱՅԱՐԱՆՈՒՄ։

Բաթում պասս. գնում է ժ. 8—31 րոպ. առ.

Բաթումից " գալիս է " 10—25 " գիշ.

Բագու ապր. և ճանապ.

գնացքը գնում է . . " 10—45 " առ.

Բագուից " " գալիս է " 2—30 " ցեր.

Շաբաթը երկու անգամ պարանքի և ճանապարհորդների գնացքի տեղ ուղևորվում է արագընթաց գնացքը։

Բագու գնում է երեքշաբթի

և շաբաթ օրերը . . . . " 10—58 " երեկ.

Բագուից գալիս է երեքշաբթի

և ուրբաթ օրերը . . . . " 7—53 " առա.

Շատ տեղերից դառնում են ինձ, «Սոխակի» լոյս տեսնելու մասին զանազան հարցեր առաջարկելով։ Այդպիսի բարի և ազնիւ զգացմանց արտայայտութեան համար, ամենքին իմ անկեղծ շնորհակալութիւնը մատուցանելուց յետոյ, պարտականութիւն եմ համարում յայտնել, որ «Սոխակ»-ի հինգերորդ հատորն արդէն ցենզօրական քննութեան մէջ է, և ստանալուն պէս, հէնց իսկոյն կսկսուի հրատարակուիլ, որի տպագրական բոլոր պատրաստութիւնքը վաղուց տեսնուած են։

Գրիգոր քահ. Գրիգորեանց։

Բագու։

4—4

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանն անդամագրուելցանկացողք կը գտնեն ընկերութեան անդորրագրերը ԵՂԲԱՐՔ ԾՈՎԻԱՆԵԱՆ բանկային կանտօրում, պարոն ԵՓՐԵՄ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ լամպայի-մագազինում և ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ։ Անդամակցութեան տարեկան վճարն է 5 րուբլ։ 10—8

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Ի նկատի առնելով՝ որ 1886 թուի յուլիսի մէկին Գօրիում գտնուող Անդրկովկասեան ուսուցչական դպրանոցի բնակարանի վարձման ժամանակը լրանում է, հրաւիրվում են ցանկացող անձինք՝ կամ յանձն առնուլ գտնելու այնպիսի մի բնակարան, որը ունենայ 534 քառակուսի սաժէն բակ և լինի բաղկացած 47 սենեակից, որոց բարձրութիւնը պէտք է լինի 5½—6 արշին և կամ՝ ի նորոյ կառուցանել այդպիսին։ Բնակարանի մօտ գտնուող հողը մէկ դեսյատինից պակաս չպէտք է լինի։ Մանրամասնութիւնը կարելի է իմանալ Անդրկովկասեան ուսուցչական դպրանոցի կանցելարիայում։

3—3

ՆԵՐԿԱ-ՆԿԱՐՉԱԿԱՆ

ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

ՕԴԵՍԱՅԻՑ

Դանովչեան փողոցում Յովհաննիսեանի տանը, պօլիցեյսկի հանդէպ.

Պատիւ ունիմ յայտնելու Թիֆլիսի յարգելի հասարակութեանը, որ ես բացել եմ այստեղ արհեստանոց, ուր ընդունում եմ ամեն տեսակ պատուէրներ արտաքին գիրերի, էկիպաժի, նշանագրական (вывесочныя) և այլ գործերի։ Նոյնպէս կպցնում եմ պաստառներ (обои), ներկում և նշխում եմ յատակներ, պարկետներ, պատուհաններ, և տան ճակատները և յարկերը, յօրինում եմ զանազանագոյն փայտերի և մարմարիոնի գոյներ. թրծում եմ (лакировать) երկաթէ սնդուկներ, մաճակալներ և այլ իրեղէններ. կատարում եմ զանազան պատուէրներ փայլուն մետալներով և հասարակ զարդարանքներով թիթեղի, ցինկի, փայտի, ապակու, մարմարիոնի և կտաւի վերայ։ Իմ ձեռագործները զանազանվում են առանձին մաքրութեամբ և շքեղութեամբ։ Պատուէրները կատարում եմ ճշդութեամբ և արագ։

Արհեստանոցս գտնվում է բակի մէջ, բնակարան № 3.

Ս. Մոստայէլեան

5—5

Дозволено цензурою. Тифлисъ, 8-го Февраля 1885 г. Տպարան Ա. Ա. Միխէլսօնի տ. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д., № 12.